



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

*Երեխայի լավագույն շահը և քաղաքացիության իրավունքը
Միջազգային փաստաթղթերում և ՀՀ օրենսդրական
հիմնախնդիրները*

Իրավական հետազոտություն

Սույն հետազոտությունն իրականացնելու համար «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն իր շնորհակալությունն է հայտնում կազմակերպության իրավախորհրդատու Անի Աղազյուլյանին

Սույն փաստաթուղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելի խնդրում ենք պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

Երևան, 2014



Բովանդակություն

Նախաբան	3
Քաղաքացիության իրավունքի սահմանումը և իրացման հնարավորությունները միջազգային փաստաթղթերում	4
Քաղաքացիության մասին ՀՀ օրենսդրությունը և այդ օրենսդրության մեջ առկա բացերը	6
Եզրակացություն	11



Նախաբան

Միջազգային պարտավորությունների և ներպետական օրենսդրության շրջանակներում ՀՀ-ն ստանձնել է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության պարտավորությունը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվել է, որ «մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության կողմից ապահովվում են միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան¹:

Սա նշանակում է, որ պետությունը պարտավորվում է հարգել և պաշտպանել յուրաքանչյուրի իրավունքները և ազատությունները: Այդ իրավունքները և ազատությունները պաշտպանելու համար պետությունը պետք է ընդունի համապատասխան օրենսդրություն՝ հաշվի առնելով միջազգային իրավունքով ամրագրված հիմնարար սկզբունքներն ու նորմերը:

Մարդու հիմնական իրավունքներն ու ազատություններն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում²: Այդ գլխում ամրագրված իրավունքները և ազատությունները շնորհված են յուրաքանչյուր մարդու: Այդ իրավունքներից և ազատություններից մեկն է քաղաքացիության իրավունքը, որը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 30.1 հոդվածով:

Քաղաքացիության իրավունքի իրացման մեխանիզմներն հստակ ամրագրված են նաև մի շարք միջազգային պայմանագրերով, որոնց անդամ-պետություն է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունը:

¹ 1995թվականի հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով ընդունված և 2005թվականի նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը

² 1995թվականի հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով ընդունված և 2005թվականի նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով պաշտպանվում են մարդու արժանապատվությունը (14); բոլոր մարդկանց հավասարությունը օրենքը հառջև (հոդ. 14.1); կյանքի իրավունքը (հոդ. 15); անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (հոդ. 16); խոշտանգումների արգելումը (հոդ. 17); արդար դատաքննության իրավունքը (հոդ. 18); բնակարանի անձեռնմխելիության իրավունքը (հոդ. 24); մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը (հոդ. 26):



Քաղաքացիության իրավունքի սահմանումը և իրացման հնարավորությունները միջազգային փաստաթղթերում

Քաղաքացիությունն իրավական կապ է պետության և անձի միջև: Քաղաքացիությունը մարդկանց շնորհում է ինքնության զգացողություն, բայց, որ ավելի կարևոր է, նրանց օժտում է իրավունքների մի լայն շրջանակ իրացնելու կարողությամբ: Հետևաբար, ապաքաղաքացիությունը, որևէ պետության քաղաքացի չլինելը կարող է վնասակար լինել, իսկ որոշ դեպքերում կործանարար ազդեցություն ունենալ խնդրո առարկա անձանց այլ իրավունքների իրացման և կենսագործունեության վրա³:

Պետությունների պարտավորությունն է հետևել, որպեսզի յուրաքանչյուր մարդ, ով բնակվում է իր տարածքում, ունենա քաղաքացիություն: Այստեղ պետության հիմնական պարտականությունն է պաշտպանել առաջին հերթին փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է քաղաքացիության հարցերին վերաբերող հետևյալ միջազգային պայմանագրերի անդամ-պետություն.

1. ՄԱԿ-ի «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի Կոնվենցիա, որի անդամ-պետություն Հայաստանի Հանրապետությունը դարձել է 1994 թվականի օգոստոսի 16-ին:
2. ՄԱԿ-ի «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի Կոնվենցիան, որի անդամ-պետություն Հայաստանի Հանրապետությունը դարձել է 1994 թվականի օգոստոսի 16-ին:

Առաջին փաստաթղթի նպատակն է պաշտպանել մասնակից-պետությունների տարածքում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց, իսկ երկրորդ փաստաթղթինը՝ կրճատել նրանց տարածքում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց թիվը՝ նրանց այդ պետությունների քաղաքացիություն շնորհելով: Այսպես,

³ Քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը // ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի անձնական ուղերձը
http://www.un.am/res/Library/UNHCR%20Publications/Protecting%20Rights%20of%20Stateless_1954_arm.pdf



«քաղաքացիություն չունեցող անձ» է համարվում այն անձը, որը չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ դրա օրենսդրության հիման վրա⁴:

ՄԱԿ-ի Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թվականի կոնվենցիան առաջին հերթին կարգավորում է անդամ-պետությունում գտնվող երեխաների՝ քաղաքացիության շնորհման ընթացակարգը:

Մասնավորապես, Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ցանկացած Պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է իր **տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ**: Այդպիսի քաղաքացիություն շնորհվում է ծնվելիս՝ օրենքի ուժով, կամ շահագրգիռ անձի կողմից կամ նրա անունից համապատասխան մարմնին՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելու միջոցով»:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Որևէ պայմանավորվող պետության տարածքում հայտնաբերված երեխան, հակառակ ապացույցների բացակայության դեպքում, համարվում է այդ տարածքում այդ պետության քաղաքացիություն ունեցող ծնողներից ծնված»:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ցանկացած Պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է Պայմանավորվող պետության տարածքում չծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ, եթե այդ անձի ծնվելու ժամանակ նրա ծնողներից որևէ մեկն ունեցել է այդ պետության քաղաքացիությունը: Եթե նրա ծնվելու ժամանակ նրա ծնողները չունեին միևնույն քաղաքացիությունը, այն հարցը, թե տվյալ անձի քաղաքացիությունը պետք է հետևի հոր, թե մոր քաղաքացիությանը, որոշվում է այդ Պայմանավորվող պետության ներպետական օրենսդրությամբ: Սույն կետի դրույթների համաձայն շնորհվող քաղաքացիությունը շնորհվում է ծնվելիս՝ օրենքի ուժով, կամ շահագրգիռ անձի կողմից կամ նրա անունից համապատասխան մարմնին՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելու միջոցով: Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանմամբ, նման ոչ մի դիմում չի կարող մերժվել»:

⁴ ՄԱԿ-ի «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թվականի Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մաս



Սույն հոդվածների առկայությունը պայմանավորված է երեխաների իրավունքների պաշտպանության կարևորությամբ: Մասնավորապես, ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և **քաղաքացիության իրավունք**, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք»:

Քաղաքացիության մասին ՀՀ օրենսդրությունը և այդ օրենսդրության մեջ առկա բացերը

Ներպետական օրենսդրությունը

- a) ՀՀ Սահմանադրությունը,
- b) Քաղաքացիության մասին ՀՀ օրենքը,
- c) Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքը,
- d) Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենք:
- e) ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3334/05/08 գործով 2009 թվականի մարտի 13-ի որոշումը:

Գործող «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը թերի է, քանի որ չի կարգավորում Հայաստանի Հանրապետությունում ծնված այն երեխաների քաղաքացիության շնորհումը, ովքեր «այլապես կդառնան քաղաքացիություն չունեցող անձիք»:

Չնայած օրենքի 12-րդ հոդվածի առկայությանը, այն ամբողջությամբ չի կարգավորում այն երեխաների քաղաքացիության ձեռքբերման հարցը, ովքեր ծնվել են ՀՀ-ում և չեն կարող ձեռք բերել այլ երկրի քաղաքացիություն: Այսպես, Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները **քաղաքացիություն չունեցող անձինք են**, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Կրկին, օրենքը չի կարգավորում այն երեխաների քաղաքացիության ձեռքբերման հարցը, ում ծնողները չնայած որ ունեն օտարերկրյա պետության քաղաքացիություն, սակայն, իրենց երկրի օրենսդրության համաձայն՝ չեն կարող այն փոխանցել երեխաներին:



Այսինքն, Քաղաքացիության մասին ՀՀ օրենքում առկա չէ ՄԱԿ-ի Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխանող դրույթ:

Հայաստանի Հանրապետությունում բացակայում է օրենք, որը կկարգավորեր ապաքաղաքացիների (քաղաքացիություն չունեցող անձանց) կարգավիճակը ՀՀ-ում, ինչը նշանակում է, որ այդ անձինք ավելի քիչ են պաշտպանված ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների կամ փախստականների համեմատ: Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը գրեթե չի ապահովում քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրացումը և չի կարգավորում ապաքաղաքացիների՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման ընթացակարգը:

Քաղաքացիության բացակայությունը կարող է բերել նրան, որ կխախտվեն մարդու այլ իրավունքները: Օրինակ, ազատ տեղաշարժման իրավունքը, երեխայի ծնողների հետ ապրելու իրավունքը, աշխատանքի իրավունքը և այլ:

Օրենքի բացակայությունը նշանակում է առաջին հերթին, որ պետությունը խախտում է վերոնշյալ Կոնվենցիաները և խախտում է խոցելի խմբերի (ապաքաղաքացիների) իրավունքները:

*«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների»
Հասարակական կազմակերպությունը իր գործունեության
շրջանակներում առնչվել է նման խնդրի հետ, երբ
ապաքաղաքացիների իրավունքների պաշտպանության օրենքի
բացակայության պատճառաբանությամբ խախտվել է երեխայի
իրավունքները (տես՝ Պրակտիկ օրինակը):*



Պրակտիկ օրինակ

2014 թվականի հունվարին «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» Հասարակական կազմակերպությունը դիմել էր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը՝ խնդրելով Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխային, ում ծնողները Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի են, փաստաթղթավորել անձնագրով:

Երեխան 2012 թվականի նոյեմբերին ծնվել է Հայաստանում: Երեխայի ծննդյան փաստի գրանցումը նույնպես կայացել է 2012 թվականին ՀՀ ՔԿԱԳ-ում: Նրան տրվել է ծննդյան վկայական:

2013 թվականի մայիսին 24-ին երեխայի հայրը ճանաչել է հայրությունը, սակայն դրանից հետո մոր և երեխայի հետ կապ չի պահպանել: Հայրը ազգությամբ հայ է, սակայն նույնպես հանդիսանում է Իրանի քաղաքացի:

2013 թվականի հուլիսին մայրը ստիպված է եղել հանձնել իր որդուն մանկատուն, քանի որ միջոցներ չի ունեցել երեխայի կենսական ծախսերը հոգալու համար: Այդ է պատճառը, որ նա ցանկանում է մեկնել Հայաստանի Հանրապետությունից: Մակայն քանի որ երեխան չունի անձնագիր, մայրը չի կարող վերջինիս իր հետ տանել Հայաստանից:

Մինչդեռ, երեխան չի կարող ճանաչվել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, քանի որ նրա հայրը հայ է, իսկ մայրը՝ պարսիկ, իսկ Իրանի Իսլամական Հանրապետության օրենսդրությունը արգելում է ամուսնությունը քրիստոնյայի և մահմեդականի միջև:

Անձնագրային և վիզաների վարչությունը մերժել է Կազմակերպության դիմումը հետևյալ պատճառաբանությամբ.

«...» ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ երեխան, ուն ծնողները նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը անհայտ է, կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե նա ծնվել է ՀՀ-ում, կամ եթե նա ծնվել է ՀՀ-ում, կամ եթե ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ կամ եթե ծնողները մշտապես բնակրում են ՀՀ-ում:

Ելնելով վերոգրյալից՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի իրավադրույթների պահանջները անչափահաս Ռ.Ռ.Բ-ին **ՀՀ քաղաքացի ճանաչելու իրավանքաբերություններում կիրառելի չեն:**

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի իրավադրույթների համաձայն՝ Ռ. Բայանի մոր դիմումի և ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթերի հիման վրա և նույն որոշմամբ սահմանված ժամանակներում ԱՎ վարչությունը պատրաստ է քննարկել երեխայի՝ ՀՀ-ում կացության կարգավիճակ տրամադրելու հարցը:

Այսինքն, ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը մերժում է Ռազմիկ Բայանյանին ՀՀ անձնագրով փաստաթղթավորելու դիմումը և համարում է նրան օտարերկրյա քաղաքացի:

Մեկ այլ տարբերակ, որն առաջարկվում է սույն խնդրի լուծման համար, երեխային փախստականի կարգավիճակ տրամադրելու ընթացակարգն է:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՀՀ տարբեր պետական մարմինների կողմից իրականացված գործողությունները, պետք է պատասխանել հետևյալ հարցերին.

- **ինչպես են պաշտպանվում այն երեխայի շահերը, ով ծնվելով Հայաստանի Հանրապետությունում, և ում ծնողները ՀՀ քաղաքացի չեն, ձեռք չի բերում իր ծնողների քաղաքացիությունը և դառնում է քաղաքացիություն չունեցող անձ;**
- **արդյոք սովալ պարագայում Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է պաշտպանել երեխայի իրավունքները և ինչպես պետք է իրականացվեն այդ իրավունքների պաշտպանությունը;**
- **արդյոք երեխան կարող է ձեռք բերել փախստականի վկայական:**

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մասնակից պետություններն այդ իրավունքների իրականացումն ապահովում են իրենց ներպետական օրենսդրության և այս բնագավառում համապատասխան միջազգային փաստաթղթերով ստանձնած իրենց պարտավորությունների համաձայն, մասնավորապես այն դեպքում, եթե այլ կերպ երեխան քաղաքացիություն չունենա»:



Մարդու իրավունքների միջազգային իրավունքի ոլորտում քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները պաշտպանված են մի շարք միջազգային պայմանագրերով, որոնց անդամ-պետություն է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունը: Մասնավորապես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր որ քաղաքացիության իրավունք ունի»:

ՄԱԿ-ի Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թվականի կոնվենցիայով ստանձնած պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով կիրառվում է Հայաստանի Հանրապետությունում Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքը և ՀՀ Կառավարության 2006 թվականի մարտի 2-ի թիվ 318-Ն «Հայաստանի հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» որոշումը:

Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *«օրենքով «օտարերկրացիներ» հասկացության մեջ ներառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք)»:*

Այսինքն, Հայաստանի Հանրապետությունը քաղաքացիություն չունեցող անձանց հավասարեցնում է օտարերկրյա քաղաքացիներին: Սա մի կողմից համապատասխանում է ՄԱԿ-ի Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիային ⁵, սակայն մյուս կողմից էլ օրենսդիրը չի հստակեցնում քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման ընթացակարգը:

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է «ծագման պետություն» հասկացությունը, ըստ որի՝ դա այն պետությունն է, որի քաղաքացին է համարվում այն անձը կամ այն պետությունը, որում բնակվում է քաղաքացիություն չունեցող անձը կամ այն անձը, որի քաղաքացիությունը հնարավոր չէ հաստատել:

⁵ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Կոնվենցիան բովանդակում է ավելի բարենպաստ դրույթներ, Պայմանավորվող պետությունը քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում է նույն վերաբերմունքը, ինչ ընդհանրապես տրամադրում է օտարերկրացիներին»



Փաստացի, սույն հոդվածի վերլուծությունից երևում է, որ եթե անձը ծվել է Հայաստանի Հանրապետությունում և այլ պետության քաղաքացի չի հանդիսանում, ապա այդ պետությունը իր «ծագման երկիրն է»: Միննույն ժամանակ, սա նշանակում է, որ, որպես անձի «ծագման երկիր», Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է պաշտպանել վերջինիս իրավունքները:

ՀՀ Կառավարության 2006 թվականի մարտի 2-ի թիվ 318-Ն «Հայաստանի հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված է Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը: Այդ կարգի 1-ին կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող (սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) համարվում է այն անձը, ով գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում), քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայականը պատրաստվում է միասնական նմուշով՝ հայերեն և անգլերեն»:

Տվյալ պարագայում անհասկանալի է, թե ինչպես են Հայաստանի Հանրապետությունում հայտնվել «մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք», եթե, ըստ Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն որևէ օտարերկրացի չի կարող մուտք գործել երկիր, եթե նա չունի անձնագիր:

Միննույն ժամանակ պարզ չէ, թե ինչի սկզբունքներից էլնելով է օրենսդիրը սահմանել «մշտապես բնակվող» հասկացության համար 183 օրը: Մա կապված է ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված «ռեզիդենտ» հասկացության հետ, սակայն կասկածելի է տվյալ պարագայում այդ սահմանման իրավաչափությունը⁶:

⁶ Օրինակ, Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի իմաստով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը»



Եզրակացություն

Փաստացի, Միացյալ ազգերի կազմակերպությունը ընդգծում և պաշտպանում է յուրաքանչյուր անձի քաղաքացիություն ունենալու կարևորությունը, քանի որ, քաղաքացի լինելով, անձը ձեռք է բերում մի շարք իրավունքներ և պարտականություններ և ավելի պաշտպանված է լինում պետության կողմից:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը փաստացի ապահովում է այն երեխաների քաղաքացիությունը, ում ծնողներն ունեն քաղաքացիություն: Օրենքը, այնուամենայնիվ, կարգավորում չի սահմանում այն դեպքերի համար, երբ երեխան ծնվել է Հայաստանի Հանրապետության տարածքում և օտարերկրյա պետությունների օրենսդրության ուժով չի կարող ձեռք բերել իր ծնողների քաղաքացիությունը:

Սա հակասում է նաև «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասին, որի համաձայն, յուրաքանչյուր երեխայի, ով ծնվել է Կոնվենցիայի անդամ-պետությունների տարածքում, պետք է շնորհվի այդ պետության քաղաքացիությունը, եթե «այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ»: